ՄԱՐԳԱՐԻՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
Էրեբունու հարկային տեսչության իրավաբանական և հարկադիր
գանձումների բաժնի առաջատար մասնագետ,
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման
ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՔ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇ

Սույն հոդվածում բացահայտված է անձի արժանապատվության՝ որպես հասարակական կյանքում մարդկային գործոնի բաղկացուցիչ մասի, անձի սոցիալ-իրավական բնութագրի, նրա սուբյեկտիվ (անձնական) իրավունքների, պարտականությունների, ազատությունների կարևոր բաղադրիչի, մարդու և հասարակության, մարդու և պետության, մարդկանց միջանձնային տարբեր հարաբերությունները կարգավորող գործիքի, իրավագիտակցության ու իրավական անհրաժեշտ ֆենոմենի, սոցիալական կապերի համակարգի, մարդկանց փոխհարաբերությունների համակարգի, որը բարդ և բազմակողմ իրավական գործիքակազմի ազդեցության առարկա է, յուրաքանչյուր մարդու սոցիալական արժեքի ընդունման արտացոլումը՝ որպես ժամանակակից հասարակության հիմնարար օրինաչափություն, սոցիալ-բարոյագիտական հատկությունների ամբողջություն:

Հիմնարար բառեր *- անձի արժանապատվություն, մարդու արժանապատվություն, մարդկային հատկանիշ, բնածին, անքակտելի, անօտարելի, երաշխիքներ, ինքնագիտակցում, արժեքային հիմք, համընդհանուր բնույթ:*

«Անձի արժանապատվություն» եզրույթն ի սկզբանե ընկալվել է որպես բարոյագիտական կատեգորիա: Սակայն, այդ հասկացության՝ որպես մարդու իրավունքների հիմքի և մարդկային հատկանիշի էության ուսումնասիրության համար անհրաժեշտ է նախ վերհանել այդ հասկացության բովանդակությունը, այնուհետև պարզաբանել դրա իմաստը և վերջում հստակեցնել խնդրո առարկայի վերաբերյալ առկա գիտամեթոդաբանական պատկերացումները[1]:

Անձի արժանապատվության ու պատվի, ինչպես նաև դրանց պաշտպանության ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ գիտական հետազոտություններ[2]: Անհրաժեշտ է նկատել, որ մարդու արժանապատվության նշանակությունն ու կարևորությունը կարելի է որոշել վերջին հաշվով միայն առկա հանգամանքների և կյանքի որոշակի բնագավառների համար:

Այսպես, պետության և իրավունքի տեսության մեջ անձի արժանապատվությունը դիտարկվում է որպես՝ ա) հասարակական կյանքում մարդկային գործոնի բաղկացուցիչ մաս, բ) անձի սոցիալ-իրավական բնութագրի, նրա սուբյեկտիվ (անձնական) իրավունքների, պարտականությունների, ազատությունների կարևոր բաղադրիչ, գ) մարդու և հասարակության, մարդու և պետության, մարդկանց միջանձնային տարբեր հարաբերությունները կարգավորող գործիք, դ) իրավագիտակցության ու իրավական անհրաժեշտ ֆենոմեն, ե) սոցիալական կապերի և մարդկանց փոխհարաբերությունների համակարգ և այլն[3]: Այն մի կողմից բարդ և բազմակողմ իրավական գործիքակազմի ազդեցության առարկա է, իսկ մյուս կողմից յուրաքանչյուր մարդու սոցիալական արժեքի ընդունման արտացոլումը՝ որպես ժամանակակից հասարակության հիմնարար օրինաչափություն և սոցիալ-բարոյագիտական հատկությունների ամբողջություն:

Առանձին հետազոտողների կողմից «անձի արժանապատվություն» հասկացության տակ նկատի է առնվում «իրավունքով/օրենքով և անհատի համամարդկային ու անհատական հատկանիշների բարոյականությամբ կարգավորվող ամբողջություն, որը բնորոշում է նրա ինքնահարգանքը, արժեքը մերձավորների և հասարակության համար» իսկ «արժանապատվություն» հասկացությունը սահմանվում է որպես «մարդու առանձնահատուկ բարոյական վերաբերմունք իր հանդեպ, ինչպես նաև նրա հանդեպ հասարակության վերաբերմունքը, որով ընդունվում է անձի արժեքը»[4]:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է կարևորել, որ «արժանապատվություն» կատեգորիան մի կողմից բնորոշում է մարդու վերաբերմունքը իր հանդեպ,

www.lawinstitute.am

մյուս կողմից այդ կատեգորիայի միջոցով արտահայտվում է հասարակության վերաբերմունքը նրա հանդեպ: Այսինքն, արժանապատվության ներքին կողմի մասին խոսելիս նախ պետք է դիտարկել այն «մարդու արժանապատվություն» կատեգորիայի սահմաններում, իսկ այնուհետև արտաքին սոցիալական գնահատականների հետ միասին հիմնավորել, որ մարդու արժանապատվությունը կազմում է նույն «անձի արժանապատվությունը»:

Ռուս իրավագետ Ա.Լ. Անիսիմովի կարծիքով անձի արժանապատվությունը իր իսկ անհատական հատկանիշների, ունակությունների, աշխարհայացքի, վարքագծի, հասարակական արժեքի, ինչպես նաև անձի ինքնագնահատականն է՝ հիմնված հասարակության կողմից տրվող գնահատականի վրա[5]:

Իսկ Տ.Ա. Կոստարևան անձի արժանապատվությունը ընկալում է որպես «մարդու և նրա շրջապատի կողմից այն փաստի գիտակցում, որ անհատն ունի որոշակի դրական բարոյական և մտավոր հատկանիշներ: Եթե անձի արժանապատվությունը բնորոշվում է առաջին հերթին անձի ինքնագիտակցությամբ, կրում է սուբյեկտիվ բնույթ, ապա պատիվն առաջին հերթին անձի օբյեկտիվ, հասարակական գնահատականն է, որը բնութագրում է մարդու բարի համբավը՝ չվարկաբեկված հեղինակությունը հասարակության մեջ»[6]:

Հատկանշական է նաև պրոֆեսոր Ն.Մ. Կուզնեցովի այն պնդումը, որ «մարդու արժանապատվություն» հասկացությունն ուսումնասիրում է քաղաքացիական իրավունքի տեսանկյունից, արժանապատվությունը դիտարկում է որպես կոնկրետ անձի համոզմունք, որ ինքը համապատասխանում է պատվի օբյեկտիվ սոցիալական այն չափանիշներին, որոնք մշակվել են հասարակության և պետության կողմից:

Կարծում ենք՝ արժանապատվությունն անխզելիորեն կապված է մարդու ունակության հետ՝ գնահատելու և համեմատելու սեփական արարքները հասարակության պահանջների հետ, ճնշելու սեփական ոչ իրավաչափ ձգտումները և մտադրությունները, որոնց իրականացումը կարող է գնահատվել որպես անպատվություն:

Պրոֆեսոր Պ.Վ. Նադտաչանի աշխատության մեջ արժանապատվությունը բնորոշվում է որպես մարդու կողմից սեփական հատկանիշների, ունակությունների, հասարակության մեջ սեփական դիրքի ներքին գնահատական՝ հաշվի առնելով սեփական զարգացածության աստիճանը, դաստիարակությունը, աշխարհայացքը և այլն[7]:

Այլ է, օրինակ, Մ.Դ. Դոբրիևայի տեսակետը, ըստ որի՝ «պատվի, արժանապատվության և գործարար հեղինակության ընդհանուր իրավունքը» անձի արժանապատվության անձեռնմխելիության ընդհանուր իրավական սկզբունք է[8]: Միևնույն ժամանակ, նույն հեղինակի կարծիքով, այնպիսի ոչ նյութական արժեքները, ինչպիսիք են պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը, չխախտված լինելու պայմաններում չեն հանդիսանում իրավական ազդեցության օբյեկտ: Օբյեկտիվորեն առկա է նման իրավունքի (վերջինիս լայն ընկալման) առկայության սոցիալական շահը, որի հիմքում ընկած է մարդու արժանապատվության անձեռնմխելիության պահպանման համընդհանուր պարտավորվածությունը, ինչպես նաև անձի համապատասխան գնահատականը (պատիվը)[9]:

Հարկ է համաձայնել Դ.Ա.Սամորոդովի կարծիքին, որ «մարդու արժանապատվության հասկացությունը սահմանվում է որպես «իրավական նորմերով պաշտպանվող ոչ նյութական արժեք, որն իրենից ներկայացնում է անհատի կողմից սեփական բարոյական, մտավոր և մասնագիտական հատկանիշների դրական գնահատում»[10]:

Բացի այդ, այլ դիրքորոշում է արտահայտել պրոֆեսոր Ա.Ֆ. Սուրժիկը, ըստ որի՝ քաղաքացու պատիվն ու արժանապատվությունն անձնական ոչ նյութական բարիքներ են, որոնց հանդեպ անձն ունի բացարձակ բնույթի անձնական ոչ նյութական իրավունք: Իրավատերը բացարձակ իրավահարաբերության մեջ է բոլորի և յուրաքանչյուրի հետ, որտեղ բոլոր այլ անձինք ունեն քաղաքացու պատիվն ու արժանապատվությունը չոտնահարելու պասսիվ դերակատարություն: Նշված բացարձակ իրավունքը, որը պատկանում է յուրաքանչյուր մարդու, ունի հավասար ծավալ յուրաքանչյուրի համար[11]:

Միևնույն ժամանակ բավականին կայուն է մարդու արժանապատվության զարգացման առկա միտումը բացարձակ փիլիսոփայական և միաժամանակ կրոնական կատեգորիայից մինչև իրավական կատեգորիա, որը մարդու հիմնական իրավունքներից և ժամանակակից պետության սահմանադրական սկզբունքներից մեկն է:

Մեծ արժեք են ներկայացնում հարակից գիտական ուղղությունների ներկայացուցիչների կողմից տրվող բնորոշումները: Այսպես, օրինակ՝ հոգեբանության տեսանկյունից մարդու արժանապատվությունը մարդու կողմից սեփական արժեքի ընկալումն է որպես մարդու, որպես կոնկրետ անհատի,

www.lawinstitute.am

որպես մասնագետի և այլն[12]:

Իսկ փիլիսոփաները անձի արժանապատվությունը բնորոշում են որպես նրա անձնային արժեքի արտահայտում[13], որպես սեփական հասարակական արժեքի ինքնագիտակցում, հասարակության հարգանքի իրավունք, որը հիմնված է հասարակության կողմից մարդու սոցիալական արժեքի ընդունման վրա: Այդուհանդերձ, այս կամ այն հասարակությունում առկա տեսակետները մարդու արժանապատվության վերաբերյալ բնորոշվում են հասարակական փոխհարաբերությունների բնույթով, որից էլ կախված է անձի դիրքը հասարակության մեջ[14]:

Այդ մոտեցումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ «մարդու արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանության մոտեցումներում սկզբունքային տարբերություններ չկան ոչ միայն իրավագիտության, այլև հասարակական տարբեր գիտությունների ներկայացուցիչների շրջանում:

Այդ իմաստով հեղինակների մեծ մասը անձի արժանապատվությունն ընկալում են որպես համեմատաբար անկախ, անձնային, անհատական գործոն, որը գոյություն ունի օբյեկտիվորեն՝ հասարակության և պետության շրջանակից դուրս, սակայն մյուս կողմից կախված է կոնկրետ հասարակության զարգացման մակարդակից, սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական պայմաններից նրա պատմական զարգացման կոնկրետ փուլում:

«Անձի արժանապատվություն» հասկացության վերոշարադրյալ բնորոշումներից և ոչ մեկը չի համապատասխանում եզրույթի միասնական ընկալման չափորոշիչներին: Որոշ հեղինակներ այդ հասկացության բովանդակության ու իմաստի բացահայտման փոխարեն ներկայացնում են դրա երկրորդային հատկանիշները կամ հետևանքային նշանակությունը:

«Անձի արժանապատվության» վերաբերյալ առավել ամբողջական ու հստակ բնութագրումը, մեր կարծիքով, տրված է պրոֆեսոր Օ.Ե. Կուտաֆինի կողմից: Նա գտնում է, որ անձի արժանապատվությունը բնորոշում է մարդու և շրջապատի կողմից որոշակի բարոյական և մտավոր հատկանիշների տիրապետության փաստի գիտակցման միջոցով, ընդ որում, այն առաջին հերթին սեփական արժեքի ընկալումն է որպես մարդ (մարդկային արժանապատվություն), որպես կոնկրետ անհատ (անձնական արժանապատվություն), որպես որոշակի սոցիալական խմբի կամ հանրության ներկայացուցիչ (օրինակ՝ մասնագիտական արժանապատվություն), այդ հանրության արժեք (օրինակ՝ ազգային արժանապավություն)[15]: Իսկ պատվի հասկացությունն արտահայտում է սեփական անձի և արարքների համապատասխանության գնահատականը սոցիալական (բարոյական) նորմերին:

Հարկ է նկատել, որ հայ իրավագետներից Վ.Այվազյանը և Գ.Մուրադյանը անձի արժանապատվությունը դիտարկում են որպես մարդկային հատկանիշ՝ ամբողջական ու հավաքական իմաստով[16]:

Հենց այդ բնորոշումն ենք նպատակահարմար գտնում ընդունել որպես հիմք հասկացության հետագա հեղինակային հստակեցված բնորոշումը մշակելիս: Ի վերջո, «անձի արժանապատվություն» հասկացության բովանդակության ուսումնասիրությունը չենք կարող լիարժեք համարել առանց այդ հասկացության իրավական, սոցիալական, փիլիսոփայական հատկանիշների ուսումնասիրության:

Այսպես, անձի արժանապատվության վերաբերյալ գիտական հետազոտությունների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ հասկացությունը բնորոշող իրավական, սոցիալ-փիլիսոփայական հատկանիշներից առավել էականները հետևյալներն են.

1. Անձի արժանապատվությունը բնածին է. այն առաջանում է մարդու ծնվելու պահից: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մինչև մարդու ծնվելը՝ պտղի մոտ, անձի արժանապատվության իրավունքի տեսական հարցը դեռևս իր համարժեք լուծումը չի ստացել. անգամ այդ տեսակետի կողմնակիցներն ունեն տարաձայնություններ պտղի (էմբրիոնի) հասակի գնահատման հարցում, որից էլ հետևում է այդ իրավունքը: Սահմանադրական իրավունքն ու դոկտրինան համարում են, որ բնածին իրավունքներն արդեն իսկ ըստ բնորոշման «մեկնվում են ոչ թե որպես ինքնին կամ ձեռքբերովի, այլ որպես բնածին և, պայմանականորեն արտահայտելով, նախապետական: Դրանք պատկանում են մարդուն ի ծնե և ծննդյան իրավունքով: Այդ իրավունքները շնորհված չեն իշխանության կողմից, ծագում են նրանցից անկախ ու առանց նրանց համաձայնության և չեն կարող հետ վերցվել: Պետությունը պարտավոր է ճանաչել այդ իրավունքները, ամրագրել դրանք իր սահմանադրության մեջ և պաշտպանել հնարավոր բոլոր միջոցներով: Դա

իրեն ժողովրդավարական համարող յուրաքանչյուր պետության սրբազան պարտքն է: Բնական, անբաժանելի, անօտարելի իրավունքներն սկսեցին ամբողջապես նույնանալ հիմնական, հիմնարար իրավունքների հետ»[17]:

2. Անձի արժանապատվությունը որոշակիացված է մշակութային և սոցիալական առումներով, այսինքն՝ նրա բովանդակությունը, ինչպես նաև պահպանման և պաշտպանության միջոցները կախված են հասարակության կյանքի կոնկրետ պատմական պայմաններից:

3. Անձի արժանապատվությունը չի վերանում մարդու մահվանից հետո, այլ ընդամենը անձի արժանապատվության պաշտպանության հետ կապված իրավասությունները փոխակերպվում են և փոխանցվում նրա հարազատներին և պետությանը, թեև իր այդ նոր որակով այն ևս մշտական չէ և ունի աստիճանաբար վերանալու միտում:

4. Անձի արժանապատվությունն անքակտելի է և անօտարելի: Մարդու արժանապատվությունը չի կարող օտարվել, քանի որ այն անձի բնական իրավունքների բաղկացուցիչ ու անքակտելի մասն է կազմում: Հետևաբար անձի արժանապատվությունն անփոխանցելի է: Այն չի կարող որևէ կերպ փոխանցվել որևէ մեկին կամ փոխանակվել, վաճառվել, ժառանգվել և կամ այլ կերպ օտարվել մարդկային անհատականությունից:

5. Անձի արժանապատվության երաշխիքները ներառում են պետականության տարրեր. այսպես, պետությունն անվերապահորեն ընդունում է անձի արժանապատվությունը, ուստի և պահպանում ու երաշխավորում դրա պաշտպանությունը:

6. Անձի արժանապատվությունը հանդես է գալիս որպես սոցիալական փոխհարաբերություններում ինքնագիտակցման ու ինքնատիրապետման արժեքային հիմք, ընդ որում, մի կողմից մարդը գիտակցում է ինքն իրեն որպես արժեք և, լինելով եզակի ու անկրկնելի, կառուցում է իր վարքագիծը ու վերահսկում իր գործողությունները այնպես, որ չոտնահարի այլ մարդկանց արժանապատվությունը, իսկ, մյուս կողմից սեփական անձի արժանապատվության՝ որպես ինքնագիտակցության ձևի վրա է հիմնվում և կառուցվում ինքնահարգանքը, անհատի պահանջը սեփական անձի հանդեպ:

7. Անձի արժանապատվությունն ունի համընդհանուր բնույթ, այսինքն՝ այն պետության կողմից դիտարկվում է ոչ թե ընդհանրության մեջ, այլ առանձին-աձանձին՝ անհատապես, և այդ իմաստով անձի արժանապատվությունը հիմք է հանդիսանում ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության համար:

8. Անձի արժանապատվությունն ունի երկակի նշանակություն՝ միաժամանակ հանդես գալով ոչ միայն որպես հասարակական միջանձնային հարաբերությունների գործոն, այլև մարդու անձնական կյանքի ոլորտի գործոն:

9. Անձի արժանապատվության պաշտպանության իրավական միջոցների անհրաժեշտ, սակայն ոչ բավարար լինելն արտահայտվում է նրանում, որ անձի արժանապատվության հանդեպ ոտնձգությունը ոչ միշտ է հնարավոր կանխարգելել վարչաիրավական, քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական գործիքակազմով, և հաճախ մարդու արժանապատվության կարգավորիչ և երաշխիք են հանդիսանում բարոյական նորմերը (այդ հասկացության կառուցվածքի ոչ միատարր բնույթից ելնելով):

10. Անձի արժանապատվության «շարժունակությունը» կամ «փոփոխականությունը» կապված է այն բանի հետ, որ անձի կողմից սեփական մարդկային արժանապատվության հոգեբանական ընկալումը կարող է փոխվել կրթական մակարդակի բարձրացման, կյանքի փորձի կուտակման հետ:

Անդրադառնալով այդ հատկանիշների համակարգային վերլուծությանը՝ անհրաժեշտ է կարևորել այն, որ եթե պատիվն ու արժանապատվությունը առաջանում են միաժամանակ՝ մարդու ծնվելու պահին, և դրանց գոյությունը ժամկետային սահմանափակում չունի, ապա անձի պատվի և արժանապատվության իրավունքը կարող է պաշտպանվել նաև նրա մահվանից հետո:

Միաժամանակ պետք է նկատել, որ անձի արժանապատվությունն անխզելիորեն կապված է մարդու ունակության հետ՝ գնահատելու և համեմատելու սեփական արարքները հասարակության պահանջների հետ, ճնշելու սեփական ոչ իրավաչափ ձգտումները և մտադրությունները, որոնց իրականացումը կարող է գնահատվել որպես անպատվություն: Այն առավելապես ընկալվում է որպես համեմատաբար անկախ, անձնային, անհատական գործոն, որը գոյություն ունի օբյեկտիվորեն՝ հասարակության և պետության շրջանակից դուրս, սակայն մյուս կողմից կախված է կոնկրետ հասարակության զարգացման մակարդակից, սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական պայմաններից նրա պատմական զարգացման կոնկրետ փուլում:

Այսպիսով, անձի արժանապատվությունը

www.lawinstitute.am

կարելի է դիտարկել որպես հասարակական կյանքում մարդկային գործոնի բաղկացուցիչ մաս, անձի սոցիալ-իրավական բնութագրի, նրա սուբյեկտիվ (անձնական) իրավունքների, պարտականությունների, ազատությունների կարևոր բաղադրիչ, մարդու և հասարակության, մարդու և պետության, մարդկանց միջանձնային տարբեր հարաբերությունները կարգավորող գործիք, իրավագիտակցության ու իրավական անհրաժեշտ ֆենոմեն, սոցիալական կապերի համակարգ, մարդկանց փոխհարաբերությունների համակարգ, որը բարդ և բազմակողմ իրավական գործիքակազմի ազդեցության առարկա է, յուրաքանչյուր մարդու սոցիալական արժեքի ընդունման արտացոլումն է որպես ժամանակակից հասարակության հիմնարար օրինաչափություն, սոցիալ-բարոյագիտական հատկությունների ամբողջություն:

---

[1] Այս հասկացությունն իր արտացոլումն է գտել փիլիսոփաներ Արիստոտելի և Պլատոնի, Ի. Կանտի և Ժան-Ժակ Ռուսոյի, Շ. Ֆուրիեի, ռուս մտավորականներ Ն.Ա. Բերդյաևի, Ս.Ն. Բուլգակովի, Ա.Ի. Գերցենի, Դ.Ս. Մերեժկովսկու, Վ.Վ. Ռոզանովի, Ն.Օ. Լոսսկու, Պ.Ա. Ֆլորենսկու, Ս.Լ. Ֆրանկի, հայ մտածողներ Մովսես Խորենացու, Մխիթար Գոշի, Շահամիր Շահամիրյանի, Մովսես Բաղրամյանի, ժամանակակից հայ իրավագետներ Ա.Երիցյանի, Վ.Այվազյանի, Գ.Մուրադյանի և այլոց աշխատություններում:

[2] Տե՛ս Кулиуш О.А. Честь, достоинство и деловая репутация - фундамент правового государства. - М., 2008; Цыбулевская О.И., Власова О.В. Достоинство личности и гражданское общество. - Саратов, 2008; Паладьев М.А. Конституционное право человека на честь и достоинство (основания, содержание, защита): Автореф. дис. ... канд. юрид. наук. - М., 2006; Власов А.А. Проблемы судебной защиты чести, достоинства и деловой репутации: Автореф. дис. ... докт. юридич. наук. - М., 2000; Потапенко С.В. Проблемы судебной защиты от диффамации в СМИ: Автореф. дис. ... докт. юридич. наук: 12.00.03. - Краснодар, 2002. - 44 с.; Дулясова М.В. Социальная защита работника: жизнь, здоровье, деловая репутация: учебное пособие для студентов высших учебных заведений. - М., 2008; Никуличева Н.Ю. Право юридических лиц на деловую репутацию и его гражданско-правовая защита. - Новосибирск, 2005; Резник Г.М., Скловский .И. Честь. Достоинство. Деловая репутация: споры с участием СМИ. - М., 2006; Эрделевский А.М. Компенсация морального вреда: анализ и комментарий законодательства и судебной практики. - 3-е изд., исправл. и дополн. - М., 2007; Кузнецов Н.М. Содержание отношений по защите чести, достоинства и деловой репутации: Автореф.дис. ... канд. юрид. наук / РУДН. - М., 2009, Երիցյան Ա. Մարդու իրավունքների և դրանց պաշտպանության հիմնախնդիրները գլոբալիզացիայի դարաշրջանում, Եր., 2007, Մարդու իրավունքները (տեսության և պրակտիկայի հիմնահարցերը) Եր., 1999, Այվազյան Վ. Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք // Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Եր., 2012, էջ 237, Մարդու իրավունքներ, Եր., 2002, Մուրադյան Գ. ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի) Եր., 2010, էջ 163-170 և ուրիշներ:

[3] Տե՛ս Общая теория государства и права: В 2 т. / Отв. ред. Марченко М.Н. Т. 1. Теория государства. М.,1998. С. 312.

[4] Տե՛ս Штанько И.Н. Достоинство личности как правовое явление: Автореф. дис. ... канд. юрид. наук. - Владимир, 2006. 7: Ընդ որում, նույն հեղինակի կողմից առաջարկվում է նաև «մարդու արժանապատվություն» և «անձի արժանապատվություն» հասկացությունների տարբերակման հետևյալ մոտեցումը, որ մարդու արժանապատվությունն անձի արժանապատվության հիմքն է:

[5] Տե՛ս Анисимов А.Л. Гражданско-правовая защита чести, достоинства и деловой репутации. М., 2001. С. 13-15.

[6] Տե՛ս Костарева Т.А. Судебная защита прав и свобод граждан. Научно-практическое пособие. М. 1999. С. 183.

[7] Տե՛ս Надтачаев П.В. Гражданско-правовая защита чести, достоинства и деловой репутации сотрудников и деловой репутации органов внутренних дел: Автореф. дис. ... канд. юрид. наук: 12.00.03 / Санкт-Петербургский университет МВД России. - СПб., 2005.

[8] Տե՛ս Добриева М.Д. Честь, достоинство, деловая репутация как объект защиты в гражданском праве и процессе. Автореф. дис.... канд. юрид. наук. М., 2004.

[9] Տե՛ս Добриева М.Д. Честь, достоинство, деловая репутация как объект защиты в гражданском праве и процессе. Автореф. дис.... канд. юрид. наук. М., 2004.

[10] Տե՛ս Самородов Д.А. Честь и достоинство по российскому гражданскому праву: Социальные основы и правовая характеристика: Автореф. дис. ... канд. юрид. наук: 12.00.03 / Юридический институт Московской академии экономики и права. М., 2006.

[11] Տե՛ս Суржик А.Ф. Честь, достоинство и деловая репутация в гражданском праве Российской Федерации: Дис. ... канд. юрид. наук / Академия народного хозяйства при Правительстве Российской Федерации. М., 2007.

[12] Տե՛ս Понятия чести, достоинства и деловой репутации: Спорные тексты СМИ и проблемы их анализа и оценки

юристами и лингвистами. Изд. 2-е, перераб. и доп./ Под ред. А.К. Симонова и М.В. Горбаневского. М., 2004. С. 12.

[13] Տե՛ս Краткая философская энциклопедия. - М.: Прогресс-Энциклопедия, 1994. С. 144.

[14] Տե՛ս Философская энциклопедия: В 5 т. М., 1962. Т. 2. С. 58.

[15] Տե՛ս Постатейный научно-практический комментарий к Конституции Российской Федерации / Под ред. академика РАН О.Е. Кутафина. М., 2003.

[16] Տե՛ս Այվազյան Վ. Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք // Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Եր., 2012, էջ 237, Մուրադյան Գ. ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի) Եր 2010., էջ 163-170:

[17] Տե՛ս Երիցյան Ա. Մարդու իրավունքները. պատմատեսական, իրավափիլիսոփայական և իրավաքաղաքական հիմնախնդիրները, Եր., 2011թ.:

Маргарита Варданян
Ведущий специалист отдела юридических и принудительных взысканий
налоговой инспекции Эребуни министерства финансов Республики Армения.
Аспирант кафедры юриспруденции академии
государственного управления Республики Армения

РЕЗЮМЕ

Правовое содержание и структура достоинства личности

В данной статье приводится историко-правовой анализ восприятия и истолкования понятия «достоинство личности», а также различных взглядов и подходов, касающихся этого понятия.

Достоинство личности является разносторонним понятием, содержание и структура которого требуют выявления и представления путем исследования различных сторон данного понятия, первоочередным из которых являются общая и частная биологическая, индивидуальная личная (достоинство личности), социальная, гендерная (женское достоинство, мужское достоинство), профессиональная (профессиональное достоинство), образовательно-культурная, национальная, религиозная, расовая (достоинство личности в зависимости от принадлежности к определенной нации, религии и/или расе).

***Ключевые слова**: достоинство личности, достоинство человека, субъективные и объективные стороны достоинства личности, общая и частная биологическая, индивидуальная личная, социальная, гендерная, профессиональная, образовательно-культурная, национальная, религиозная, расовая, возрастная, сложно-динамическая система, со стойкими и переменными элементами.*

Margarita Vardanyan
Leading Specialist of the Department of Legal and Compulsory Sanctions of
Erebuni Tax Inspectorate of the Ministry of Finance of the Republic of Armenia.
Graduate student of chair of Jurisprudence of the Public Administration Academy of RA.

SUMMARY

The juridical structure and content of the Dignity of the Human person

This article covers the interpretation and the perception of the 'Dignity of the Human Person', the analysis of its several historical-juridical approaches and views.

The human dignity is a multi-faced concept, the structure and content of which can only be revealed by studying the several aspects of the concept. The main aspects include general and special biological aspects, individual, personal (the person's dignity), social, gender-related (dignity of men and women), professional (professional dignity), educational-cultural, national, religious, racial aspects (the person's dignity in due to the person's nationality, religion and/or race).

***Keywords**: the person's dignity, the human dignity, the objective and subjective aspects of the person's dignity, general and special, biological, educational-cultural, national, religious, racial, age-related, complex dynamic system, with stable and variable elements.*